Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
2019թ. դեկտեմբերի 30-ի
N3237-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ՎԱՐՔԱԳԾԻ (ԷԹԻԿԱՅԻ)

1. Սույն կանոններով սահմանվում են դիվանագետի վարքագծի (էթիկայի) կանոնները (այսուհետ՝ կանոններ) ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ՝ ծառայողական պարտականություններից դուրս:

2. Սույն կանոնները միտված են ապահովելու դիվանագետի պատշաճ վարվելակերպն ու վարքագիծը, ամրապնդելու հասարակության վստահությունը դիվանագիտական ծառայության նկատմամբ:

3. Սույն կանոնների խախտումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

4. Դիվանագետը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

4.1 հավատարիմ մնալ դիվանագետի երդմանը.

4.2 ցուցաբերել անմնացորդ հավատարմություն ու նվիրվածություն Հայաստանի Հանրապետությանը և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, հարգել պետության խորհրդանիշները.

4.3 հանրորեն (գրավոր կամ բանավոր) չքննադատել պետության և իշխանության ներկայացուցիչներին ու նրանց գործողությունները, զերծ մնալ այնպիսի գործողություններից կամ հրապարակային հայտարարություններից, որոնք կասկածի տակ են դնում Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կուրսը.

4.4 ապահովել դիվանագիտական ծառայության քաղաքական անաչառությունը,

4.5 չդրսևորել այնպիսի վարքագիծ (գործողություն կամ անգործություն) կամ պահվածք, որը կարող է արատավորել Հայաստանի Հանրապետության, դիվանագիտական ծառայության հեղինակությունը և վարկանիշը կամ դիվանագետի կոչումն ու համբավը.

4.6 իր ծառայողական պարտականությունները կատարելու համար չստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, իսկ արարողակարգային կամ պաշտոնական միջոցառումների ժամանակ պաշտոնի բերումով դիվանագետի

ստացած նվերները տնօրինվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

4.7 ճշգրիտ, ժամանակին և պատշաճ կարգով կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները.

4.8 չօգտագործել կամ չչարաշահել պաշտոնական (ծառայողական) դիրքը և աշխատանքային միջոցները կամ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած կամ ձեռք բերված տեղեկությունները՝ ինչպես անձնական կամ երրորդ անձանց շահերին, այնպես էլ կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների շահերին ծառայեցնելու և այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու նպատակով.

4.9 վերադասին տեղեկացնել մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ իր շփումների մասին.

4.10 քաղաքացիների հետ ցանկացած բնույթի հանդիպումների ու քննարկումների ընթացքում դրսևորել զսպվածություն և ցուցաբերել պատշաճ վարվելակերպ, քաղաքացիների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք, չհրաժարվել քաղաքացիների հարցադրումներին պատասխանելուց.

4.11 անմիջական ղեկավարին տեղեկացնել օտարերկրյա պետությունում և Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դիվանագետների ու օտարերկրյա պաշտոնատար անձանց հետ իր պաշտոնական հանդիպումների և դրանց բովանդակության մասին,

4.12 ծառայողական պարտականությունները կատարելիս ունենալ ներկայացուցչական տեսք, պահպանել հանդերձանքի համապատասխան պայմանները.

4.13 Դիվանագետը պարտավոր է պահպանել նախարարի կողմից սահմանված ներքին կարգապահական կանոնները: